

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/2

17 հունվարի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի 11.12.2013 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ 25.10.2013 թ-ի թիվ 2119080 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի գանգատում բերված փաստարկները.

Լինելով անհատ ձեռներեց՝ տանը կից ունենալով փոքրիկ ֆոտոսրահ, իր հանապազօրյա հացը վաստակում է արդար քրտինքով և ամենայն պատասխանատվությամբ է մոտենում իր գործին:

Հոկտեմբերի 15-ին Աշտարակի հարկային տեսչության աշխատակիցները, այցելելով իր սրահ՝ ներկայանալով որպես հաճախորդ, ցանկություն են հայտնել լուսանկարվել: Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանը մերժել է նրանց ասելով, որ իր ՀԴՄ-ն գտնվում է անսարք վիճակում: Բացի այդ, տվյալ օրը Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանը չի աշխատել, իսկ այդ սրահն իր տան սենյակներից մեկն է՝ տան հիմնական մուտքն անցնում է ֆոտոսրահի միջով: Հարկային տեսչության աշխատակիցները խնդրել են պատճենահանել ինչ-որ փաստաթուղթ: Այնուհետև ներկայանալով որպես հարկայինի աշխատակիցներ, առանց հանձնարարագրի հայտարարել են, որ 100 դրամի ՀԴՄ կտրոն չտրամադրելու պատճառով պիտի տուգանեն: Սակայն, երբ Անդրանիկ Վարդանյանը մինչ այդ արդեն ասել էր, որ ՀԴՄ-ն անսարք վիճակում է, տեսուչները խաբեության դիմելով պահանջել են գրել, թե ՀԴՄ-ն սպասարկման կենտրոնում գտնվելու հետևանքով քացակայում է: Հարկային տեսուչներն առաջարկել են հաջորդ օրը ներկայանալ հարկային տեսչություն և որևէ խնդիր չի լինի: Ընդ որում, այդ պահին սրահում ներկա են եղել Անդրանիկ Վարդանյանի մտերիմները:

Հարկային տեսչություն ներկայանալուն պես Անդրանիկ Վարդանյանին ներկայացրել են 150.000 դրամի ակտ՝ 100 դրամի ՀԴՄ կտրոն չտալու համար և պահանջել են ստորագրել այն: Անդրանիկ Վարդանյանը հրաժարվել է ստորագրել: Անդրանիկ Վարդանյանը այդ օրն ընդառաջ գնալով իրենց խնդրանքին պատճենահանել է փաստաթուղթը և գրել այն դիմումը, որն իրենք են ասել, չիմանալով տվյալ օրենքի ճշգրտության մասին:

Ըստ գանգատի, Անդրանիկ Վարդանյանը մասնակցել է Լաչինի մարդասիրական միջանցքի պաշտպանությանը և արժանի չէ նման վերաբերմունքի:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանը խնդրում է անվավեր ճանաչել ստուգման ակտը և օրենքի սահմաններում պատժել այն անձանց, ովքեր ոչ միայն խախտել, այլև նենգության ու ցինիզմի ճանապարհով փորձել են անել այն, ինչ դեմ է բոլոր բարոյական արժեքներին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 24.09.2013 թ-ի թիվ 2212139 հանձնարարագրի Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում), որի արդյունքում 15.10.2013 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2212139 արձանագրությունը:

Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 15.10.2013 թ-ի թիվ 2212139 արձանագրությունում մասնավորապես նշված է.

հարկային տեսուչ Սևակ Սարգսյանի կողմից 15.10.2013 թ-ին ժամը 12:40-ի սահմաններում ք.Աշտարակ, Նարեկացու 63 հասցեում գտնվող լուսանկարչատնից կատարվեց հսկիչ գնում 100 դրամի չափով՝ պատճենահանում, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց:

Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ խախտվել են ՀՀ Կառավարության 26.08.04թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <գ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից հրապարակվել է 16.10.2013 թ-ի թիվ 2119080 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի մոտ իրականացված ստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ 25.10.2013 թ-ի թիվ 2119080 ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ): Ստուգման ակտով կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում հարկային տեսուչ Սևակ Սարգսյանը պնդեց, որ իր կողմից 15.10.2013 թ-ին ժամը 12:40-ի սահմաններում ք.Աշտարակ, Նարեկացու 63 հասցեում գտնվող լուսանկարչատնից կատարվել է 100 դրամի հսկիչ գնում: Մասնավորապես, պատճենահանվել է փաստաթուղթ, որի դիմաց կանխիկ վճարված 100 դրամը ՀԴՄ-ի բացակայության պատճառով Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Քննարկման ընթացքում ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք Հանձնաժողովին ներկայացրեցին Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի 15.10.2013 թ-ի գրավոր հայտարարությունը, որի համաձայն կատարված հսկիչ գնման արդյունքում ՀԴՄ կտրոն չի տրամադրվել ՀԴՄ-ի անսարքության պատճառով: 15.10.2013 թ-ի հայտարարությունում Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանը նշել է նաև, որ ՀԴՄ-ն գտնվում է սպասարկման կենտրոնում:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի մոտ կատարվել է 100 դրամի հսկիչ գնում, որի դիմաց ՀԴՄ-ի բացակայության պատճառով չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Այսինքն, Ա/Ձ Անդրանիկ Վարդանյանի կողմից խխտվել են ՀՀ Կառավարության 26.08.04 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <գ> ենթակետի պահանջները, որի համար ստուգման ակտով կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Հանձնաժողովի նիստերի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ